ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 12-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/2Շ»

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/2Շ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2019 թվականի ապրիլի 12-ին տրամադրված պարզաբանումը՝

ՀԱՐՑԱԴՐՈՒՄ

Հ-6, Հ-2 - Եղվարդի տր. հանգույց - Մ-1 վթարային տր. հանգույցի հիմնանորոգման աշխատանքների վերաբերյալ.

1. Գոյություն ունեցող ուղեանցի կազմատում բաժնում նախատեսված է թռիչքային կառուցվածքների հավաքովի Б1 և Б2 ե/Բետոնե հեծանների և անցումային սալերի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը: Խնդրում եմ պարզաբանել որտեղ պետք է հանձնել վերոնշյալը և հեռավորությունը ուղեանցից:

2. Թռիչքային կառուցվածքներ բաժնում թռիչքային կառուցվածքների սոսնձային ջրամեկուսացումից հետո ամրանավորված պաշտպանիչ շերտը նախատեսված չէ: Խնդրում եմ տալ պարզաբանում:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1-ին կետի վերաբերյալ:

Շինարարական աշխատանքները իրականացնող կապալառու ընկերությունը աշխատանքների կատարման ընթացքում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական

տեխնոլոգիաների նախարարությանը (այսուհետև՝ Պատվիրատու) գրավոր տեղեկացնում է ապամոնտաժված ապրանքանյութական արժեքների տեսակի և քանակի մասին, որից հետո Պատվիրատուն սահմանված ձևով կտնօրինի ապամոնտաժված ապրանքանյութական արժեքները:

2-րդ կետի վերաբերյալ:

Թռիչքային կառուցվածքների «տեխնոէլաստոմոստ–Ճ» բազմաշերտ սոսնձային ջրամեկուսիչ շերտը ունի էլաստիկություն և բարձր ջերմակայունություն, որի շնորհիվ նախատեսված է ա/բետոնե շերտը տեղադրել անմիջապես «տեխնոէլաստոմոստ–Ճ»-ի վրա:

Գնումների համակարգող՝ Ա. Մկրտչյան

Հեռախոս 010 59 00 48